

## ՈՒՂԵՑՈՒՅՑ

### ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ

(առ 01.04.2013թ.)

Սույն ուղեցույցը ներառում է ՀՀ օրենքների եւ այլ իրավական ակտերի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ընդունած որոշումների մասին տեղեկատվություն, մասնավորապես.

- քննության առնված ՀՀ օրենքները եւ այլ իրավական ակտերը՝ ըստ այբբենական հերթականության.
- իրավական ակտի դրույթները՝ ըստ հոդվածների թվագրման հերթականության.
- սահմանադրական դատարանի որոշման համապատասխան կետերը՝ ըստ որոշման մեջ առկա համարակալման.
- սահմանադրական դատարանի որոշման ամսաթիվը:

Ուղեցույցը հնարավորություն կտա համառոտ եւ դասակարգված տեղեկատվություն ստանալ կոնկրետ իրավական ակտի (դրա տարբեր դրույթների) մասին սահմանադրական դատարանի կողմից ընդունված բոլոր որոշումների վերաբերյալ: Ուղեցույցը նաեւ օգտակար կարող է լինել ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ գործունեության մեջ ներգրավված անձանց, ՀՀ սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների, հանրության լայն շրջանակի համար:

Սույն ուղեցույցը կազմել է ՀՀ սահմանադրական դատարանի անդամ Արեւիկ Պետրոսյանը:

N	ՏՏ օրենքները եւ այլ իրավական ակտերը	Իրավական ակտի դրույթը	ՄԳ որոշումը	ՄԳ որոշման ամսաթիվը
1.	<b>«Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենք (ընդունվել է 20.02.2002թ.)</b>	12 եւ 14-րդ հոդվածներ	<p>1. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքի 12-րդ հոդվածը համապատասխանում է ՏՏ Սահմանադրությանը:</p> <p>2. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «Պարզամավորը կարող է դուրս գալ խմբակցությունից՝ այդ մասին գրավոր փեղյակ պահելով համապատասխան խմբակցության ղեկավարին» դրույթը քվեաթերթիկներում որպես ընտրական ցուցակի թեկնածուներ չնշված պարզամավորների առնչությամբ այնքանով, որքանով նպաստում է Ազգային ժողովում ժողովրդի ազատ կամաարտահայտմամբ ձեւավորված քաղաքական հավասարակշռության փոփոխությանը, ճանաչել ՏՏ Սահմանադրության 1-ին, 2-րդ եւ 7-րդ հոդվածների պահանջներին <b>հակասող եւ անվավեր:</b></p>	30 հունիսի 2009 թվականի ՄԴՈ - 810
		35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի վերջին նախադասություններ, 49-րդ հոդվածի «ե» կետ, 112-րդ հոդվածի 2-րդ կետ, 4-րդ կետի վերջին նախադասություն եւ	<p>1. ՏՏ Սահմանադրության 27 հոդվածի 3-րդ եւ 4-րդ մասերին <b>հակասող եւ անվավեր</b> ճանաչել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքի 35 հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի վերջին նախադասություններում, 112 հոդվածի 2-րդ կետով, 4-րդ կետի վերջին նախադասությամբ եւ 5-րդ կետով նախատեսված դրույթները:</p> <p>2. ՏՏ Սահմանադրության 62 հոդվածին <b>հակասող եւ անվավեր</b> ճանաչել «Ազգային ժողովի կանոնակարգ» ՏՏ օրենքի 49 հոդվածի «ե» կետով նախատեսված դրույթը:</p>	16 փետրվարի 2007 թվականի ՄԴՈ - 678

		5-րդ կետ		
2.	<p>«Անշարժ գույքի մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 27.12.1995թ.)</p>	<p>22-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասեր</p>	<p>1. «Անշարժ գույքի մասին» ՆՏ օրենքի 22 հոդվածի երկրորդ մասը, համաձայն որի «Նասարակության եւ պետության կարիքների համար անշարժ գույքի համարժեք փոխհատուցման չափը սահմանվում է ՆՏ կառավարության որոշմամբ՝ հիմնվելով ՆՏ կառավարության եւ օրարման ենթակա անշարժ գույքի սեփականափրոջ միջեւ բանակցությունների արդյունքի եւ օրարման ենթակա անշարժ գույքի սեփականափրոջ գրավոր համաձայնության վրա», համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:</p> <p>2. «Անշարժ գույքի մասին» ՆՏ օրենքի 22 հոդվածի երրորդ մասը, համաձայն որի «Եթե անշարժ գույքի սեփականատերը համաձայն չէ ՆՏ կառավարության կողմից գույքի օրարման կամ փոխհատուցման չափի հետ, ապա ՆՏ կառավարությունը անշարժ գույքի օրարումը կարող է իրականացնել միայն դատական կարգով», <b>չի համապատասխանում</b> ՆՏ Սահմանադրության 8 եւ 28 հոդվածներին:</p> <p>Անձի սեփականությունը՝ ՆՏ Սահմանադրության 28 հոդվածի երկրորդ մասով նախատեսված հիմքերով կարող է օրարվել, իսկ նրա համաձայնության բացակայության դեպքում պետության կողմից սեփականության իրավունքը դադարեցվել միայն կոնկրետ անշարժ գույքի վերաբերյալ օրենք ընդունելու միջոցով, որում կհիմնավորվի օրարման բացառիկ կարեւորությունն ու նշանակությունը եւ կնշվի, թե օրարվող անշարժ գույքը հասարակության եւ պետության որ կարիքների բավարարմանն է ուղղվելու:</p>	<p>27 փետրվարի 1998 թվականի ՍԴՈ - 92</p>

			<p>Օրենքը միաժամանակ կառավարությանը կպարտավորեցնի, համապարասխան ֆինանսաբնութսական հաշվարկի հիման վրա, շուկայական գների հաշվառմամբ, կառավարության եւ օտարման ենթակա անշարժ գույքի սեփականափրոջ միջեւ բանակցությունների արդյունքի եւ վերջինիս գրավոր համաձայնության հիման վրա սահմանել փոխհարուցման չափը, որը սեփականափրոջ կողմից ենթակա է դաբական վիճարկման:</p> <p><b>3.</b> «Անշարժ գույքի մասին» ՆՆ օրենքի 22 հոդվածի չորրորդ մասը, համաձայն որի «Մինչեւ դաբարանի որոշման օրինական ուժի մեջ մտնելը հասարակության եւ պետության կարիքների համար օտարման ենթակա անշարժ գույքի սեփականաբերը պարտավոր է ձեռնպահ մնալ անշարժ գույքին վնաս հասցնելուց», <i><b>չի համապարասխանում</b></i> ՆՆ Սահմանադրության 8, 28 եւ 44 հոդվածներին:</p> <p><b>4.</b> «Անշարժ գույքի մասին» ՆՆ օրենքի 22 հոդվածի հինգերորդ մասը, համաձայն որի «Նասարակության եւ պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման ընթացակարգը սահմանում է ՆՆ կառավարությունը՝ ելնելով սույն հոդվածի դրույթներից», <i><b>չի համապարասխանում</b></i> ՆՆ Սահմանադրության 8 եւ 28 հոդվածներին:</p> <p>ՆՆ կառավարությունը չի կարող հասարակության եւ պետության կարիքների համար անշարժ գույքի օտարման այնպիսի ընթացակարգ սահմանել, որը նրան կլիագորինման անշարժ գույքի օտարման իրավունք:</p>	
--	--	--	--	--

3.	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 14.05.1997թ.)	2-րդ հոդվածի 2-րդ մաս	3. «Ավելացված արժեքի հարկի մասին» ՆՏ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:	25 նոյեմբերի 2008 թվականի ՄԴՈ - 780
4.	«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 07.05.2002թ.)	10-րդ հոդվածի 3-րդ կետը	1. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՆՏ օրենքի 10 հոդվածի 3-րդ կետը սույն որոշման մեջ ՆՏ սահմանադրական դատարանի արտահայտած <b>իրավական դիրքորոշումների շրջանակներում</b> համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:	26 մայիսի 2009 թվականի ՄԴՈ - 804
		13-րդ հոդված և 11-րդ հոդվածի 6-րդ կետը	1. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՆՏ օրենքի 13-րդ հոդվածը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը: 2. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՆՏ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:	4 հոկտեմբերի 2011 թվականի ՄԴՈ - 990
5.	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 30.04.1996թ.)	71-րդ հոդվածի 8-րդ կետը և 93-րդ հոդվածի 4-րդ կետը	1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՆՏ օրենքի 71 հոդվածի 8-րդ կետի նախապայմաններ սահմանող՝ «... նա չի մասնակցել ժողովին կամ այդ որոշման դեմ է քվեարկել» դրույթը <b>չի համապատասխանում</b> ՆՏ Սահմանադրության 38 և 39 հոդվածներին: 2. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՆՏ օրենքի 93 հոդվածի 4-րդ կետը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:	13 նոյեմբերի 1998 թվականի ՄԴՈ - 138
6.	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 25.09.2001թ.)	56, 57 և 58-րդ հոդվածներ	1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՆՏ օրենքի 56-րդ հոդվածը սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած <b>իրավական դիրքորոշումների շրջանակներում</b> համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:	13 հուլիսի 2010 թվականի ՄԴՈ - 903

			2. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՆՏ օրենքի 57 եւ 58-րդ հոդվածների սահմանադրականությունը որոշելու մասով գործի վարույթը կարճել:	
7.	<b>«Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՆՏ օրենք</b> (ընդունվել է 28.12.1998թ.)	7 եւ 19-րդ հոդվածներ	1. «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՆՏ օրենքի 7 հոդվածը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:  2. «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» ՆՏ օրենքի 19 հոդվածը՝ ՍԴՈ-753 եւ սույն որոշումների մեջ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված <b>իրավական դիրքորոշումների շրջանակներում</b> համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:	18 հուլիսի 2009 թվականի ՍԴՈ - 816
8.	<b>«Դատախազության մասին» ՆՏ օրենք</b> (ընդունվել է 22.02.2007թ.)	55-րդ հոդվածի 13-րդ մասի առաջին նախադասություն	1. «Դատախազության մասին» ՆՏ օրենքի 55-րդ հոդվածի 13-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:	4 մայիսի 2010 թվականի ՍԴՈ - 881
9.	<b>«Դատական ծառայության մասին» ՆՏ օրենք</b> (ընդունվել է 07.07.2006թ.)	14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետ	1. «Դատական ծառայության մասին» ՆՏ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված <b>իրավական դիրքորոշումները</b> , նկատի ունենալով, որ նման իրավակարգավորումը հեղափոխում է իրավաչափ նպատակ՝ նպաստելու դատավորի անկախությանը և գործունեության արդյունավետությանը, համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:	18 հոկտեմբերի 2011 թվականի ՍԴՈ - 996
10.	<b>«Դատավորի կարգավիճակի մասին» ՆՏ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՆՏ օրենք</b>	1-ին հոդված (18 հոդվածի նոր խմբագրություն)	1. 2004 թվականի մարտի 31-ին ընդունված՝ «Դատավորի կարգավիճակի մասին» ՆՏ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՆՏ օրենքի 1-ին հոդվածով (18 հոդվածի նոր խմբագրություն) նախատեսված դրույթը, համաձայն	20 սեպտեմբերի 2006 թվականի ՍԴՈ - 647

	<b>(ընդունվել է 31.03.2004թ.)</b>		որի՝ կենսաթոշակի ամենամսյա հավելավճարի որոշման համար հիմք է ընդունվում դաբալորի գբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի, այլ ոչ թե աշխատավարձի, 75 փոկուսը, ճանաչել ՆՏ Սահմանադրության 94 հոդվածի 1-ին մասի պահանջներին <b>հակասող եւ անվավեր:</b>	
<b>11.</b>	<b>«Զինձառայողների եւ նրանց ընդհանրանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 27.10.1998թ.)</b>	6 եւ 8-րդ հոդվածներ	<b>1.</b> «Զինձառայողների եւ նրանց ընդհանրանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՆՏ օրենքի 6-րդ հոդվածը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:  <b>2.</b> «Զինձառայողների եւ նրանց ընդհանրանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՆՏ օրենքի 8-րդ հոդվածը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան փրված բովանդակության մասով, որով սահմանափակվում է անձի իրավունքը կենսաթոշակը նշանակելուց հետո կատարել վերընդհանրություն, ճանաչել ՆՏ Սահմանադրության 31 եւ 83.5-րդ հոդվածների պահանջներին <b>հակասող եւ անվավեր:</b>	10 փետրվարի 2010 թվականի ՍԴՈ - 865
<b>12.</b>	<b>«Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ գբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 26.12.2002թ.)</b>	8-րդ հոդվածի 1-ին մաս	<b>1.</b> .... «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների եւ ինքնակամ գբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՆՏ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով գործի վարույթը կարճել՝ հիմնվելով «Սահմանադրական դաբարանի մասին» ՆՏ օրենքի 32 հոդվածի 3-րդ մասի, 60 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի եւ 69 հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերի վրա:	4 ապրիլի 2008 թվականի ՍԴՈ - 747
<b>13.</b>	<b>«Իրավական ակտերի մասին» ՆՏ օրենք</b>	78-րդ հոդվածի 2-րդ մաս եւ 3-րդ մասի 3-րդ	<b>1.</b> «Իրավական ակտերի մասին» ՆՏ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՆՏ Սահմանադրության 42-րդ	29 նոյեմբերի 2011 թվականի

	(ընդունվել է 03.04.2002թ.)	պարբերություն	<p>հոդվածի 4-րդ մասի պահանջներին <b>հակասող եւ անվավեր:</b></p> <p>2. «Իրավական ակտերի մասին» ՆՏ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերությունը, <b>սույն որոշման հիման վրա «Իրավական ակտերի մասին» ՆՏ օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի ուժը կորցնելու պայմաններում,</b> համապարասխանում է ՆՏ Սահմանադրությանը:</p>	<b>ՄԴՈ - 1000</b>
14.	«Կուսակցությունների մասին» ՆՏ օրենք (ընդունվել է 03.07.2002թ.)	31-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետեր	<p>1. «Կուսակցությունների մասին» ՆՏ օրենքի 31 հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերի դրույթները ճանաչել ՆՏ Սահմանադրության 28 հոդվածի 2-րդ մասին եւ 43 հոդվածին <b>հակասող եւ անվավեր:</b></p> <p>2. «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով Սահմանադրության 28 հոդվածի 2-րդ մասին եւ 43 հոդվածին <b>հակասող եւ անվավեր</b> ճանաչել «Կուսակցությունների մասին» ՆՏ օրենքի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված փվյալ ակտի 31 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի այն դրույթը, համաձայն որի՝ «Կուսակցությունը ենթակա է լուծարման, եթե Ազգային ժողովի իրար հաջորդող ցանկացած երկու ընտրություններում համամասնական ընտրակարգով ընտրություններին չի մասնակցել»:</p> <p>3. «Սահմանադրական դափարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով Սահմանադրության 31 հոդվածին <b>հակասող եւ անվավեր</b> ճանաչել նաեւ «Կուսակցությունների մասին» ՆՏ օրենքի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված փվյալ ակտի 31 հոդվածի 4-րդ մասի այն դրույթը, համա-</p>	22 դեկտեմբերի 2006 թվականի ՄԴՈ - 669



			ձայն որի՝ «Կուսակցության դափական կարգով լուծարումից հետո մնացած գույքը փոխանցվում է Նայասարանի Նանրապետությանը»:	
15.	«Նամաներում հայտարարելու մասին» ՆՆ ԱԺ որոշում (ընդունվել է 19.06.2009թ.)	8-րդ կետի 2-րդ ենթակետ	1. «ՆՆ վճռաբեկ դատարանի դիմումների հիման վրա՝ «Նամաներում հայտարարելու մասին» ՆՆ Ազգային ժողովի 2009 թվականի հունիսի 19-ի որոշման 8-րդ կետի 2-րդ ենթակետի՝ ՆՆ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	19 հոկտեմբերի 2010 թվականի ՄԴՈ - 921
16.	ՆՆ աշխատանքային օրենսգիրք (ընդունվել է 09.11.2004թ.)	14-րդ հոդված	<p>1. ՆՆ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածը համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը:</p> <p>2. ՆՆ աշխատանքային օրենսգրքի 14-րդ եւ 102-րդ հոդվածների, ՆՆ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 4-րդ մասի, 298-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաեւ ՆՆ սրանձնած միջազգային պարավորությունների համադրված վերլուծությունից բխում է, որ ՆՆ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի <b><u>սահմանադրաիրավական բովանդակությունը</u></b> սույն գործի շրջանակներում այդ նորմի կիրառման պահին չի բացառել աշխատանքային պայմանագրի բացակայության պայմաններում, սակայն համապատասխան ապացույցների առկայության դեպքում աշխատողի՝ իր փաստացի կատարած աշխատանքի դիմաց համարժեք հատուցում սրանալու իրավունքի դափական պաշտպանության հնարավորությունը:</p> <p>3. «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի համաձայն՝ քաղաքացի Գալուստ Ծիրինյանի գործով ընդունված վերջնական դափա-</p>	18 հուլիսի 2012 թվականի ՄԴՈ - 1038

			կան ակտը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:	
		73-րդ հոդված էւ 75-րդ հոդվածի 3-րդ մաս	<p>1. ՏՏ Սահմանադրության 32 հոդվածի 3-րդ մասին էւ 43 հոդվածին <b>հսկաստդ էւ անվավեր</b> ճանաչել ՏՏ աշխատանքային օրենսգրքի 73 հոդվածում էւ 75 հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթները՝ այնքանով, որքանով գործադուլի իրավունքը պայմանավորում են միայն կոլեկտիվ պայմանագրի կնքման հետ կապված կոլեկտիվ վեճը չուժվելու հանգամանքով էւ արգելափակում են գործադուլի իրավունքը նոր հանգամանքներում՝ նաեւ «...այն պարավորություններին ենթարկվելու պայմանով, որոնք կարող են ծագել նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից»:</p> <p>2. «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՏՏ Սահմանադրության 32 հոդվածի 3-րդ մասին էւ 43 հոդվածին <b>հսկաստդ էւ անվավեր</b> ճանաչել նաեւ ՏՏ աշխատանքային օրենսգրքի վիճարկվող դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված փվյալ ակտի 60 հոդվածի 2-րդ մասի վերջին պարբերության՝ «...իսկ գործադուլ կազմակերպելն արգելվում է» դրույթը:</p>	7 փետրվարի 2007 թվականի ՄԴՈ - 677
		113-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ էւ 113-րդ հոդվածի 3-րդ մաս	<p>1. ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետը համապատասխանում է ՏՏ Սահմանադրությանը:</p> <p>2. ՏՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի երրորդ մասը համապատասխանում է ՏՏ Սահմանադրությանը:</p>	1 հունիսի 2010 թվականի ՄԴՈ - 891

	<p>113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը և 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը</p>	<p>1. ՆՏ աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը՝ այնքանով, որքանով չի երաշխավորում հավասար և ոչ խտրական իրավապայմանագրային հարաբերություններ աշխատողի և գործատուի միջև, ճանաչել ՆՏ Սահմանադրության 14.1. և 32 հոդվածներին <b>հակասող և անվավեր:</b></p> <p>2. ՆՏ աշխատանքային օրենսգրքի 114 հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը՝ «բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատողը ձեռք է բերել ծերության կենսաթոշակ ստանալու իրավունք կամ ստանում է այդ կենսաթոշակը» բառակապակցության մասով ճանաչել ՆՏ Սահմանադրության 14.1. և 32 հոդվածներին <b>հակասող և անվավեր:</b></p>	<p>24 փետրվարի 2009 թվականի ՍԴՈ - 792</p>
	<p>113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը</p>	<p>1. ՆՏ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը, 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետը՝ հաշվի առնելով ՆՏ սահմանադրական դատարանի՝ սույն որոշման մեջ արտահայտած <b>իրավական դիրքորոշումները</b>, համապատասխանում են ՆՏ Սահմանադրությանը:</p>	<p>11 հոկտեմբերի 2011 թվականի ՍԴՈ - 991</p>
	<p>221-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը</p>	<p>1. ՆՏ աշխատանքային օրենսգրքի 221-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետը՝ «...ինչպես նաև կամայականություն դրսևորելը» բառակապակցության մասով ճանաչել ՆՏ Սահմանադրության 1, 3, 14.1-րդ հոդվածների պահանջներին <b>հակասող և անվավեր:</b></p>	<p>15 հունիսի 2010 թվականի ՍԴՈ - 896</p>
	<p>265-րդ հոդվածի 2-րդ մաս</p>	<p>1. ՆՏ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի երկրորդ մասը՝ առաջին նախադասության «կամ այլ» բառակապակցության մասով, ճանաչել ՆՏ Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի և 32-րդ հոդվածի պահանջներին <b>հակասող</b></p>	<p>7 հուլիսի 2010 թվականի ՍԴՈ - 902</p>

			<i>ևւ անվավեր:</i>	
17.	<b>ՏՏ դատական օրենսգիրք (ընդունվել է 21.02.2007թ.)</b>	13-րդ հոդվածի 6-րդ կետ	6. ՏՏ դատական օրենսգրքի 13 հոդվածի 6-րդ կետը համապատասխանում է ՏՏ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ՏՏ սահմանադրական դատարանի արտահայտված <b>իրավական դիրքորոշումների շրջանակներում:</b>	8 հոկտեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 765
		14-րդ հոդվածի 3-րդ մաս	<p>1. ՏՏ դատական օրենսգրքի 14 հոդվածի 3-րդ մասը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան փրված բովանդակության շրջանակներում, ճանաչել ՏՏ Սահմանադրության 3 հոդվածի 2-րդ մասի, 18 հոդվածի 1-ին մասի, 55 հոդվածի 11-րդ մասի եւ 95 հոդվածի պահանջներին <b>հսկասող ևւ անվավեր:</b></p> <p>2. «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիմքերով ՏՏ Սահմանադրությանը <b>հսկասող ևւ անվավեր</b> ճանաչել նաեւ ՏՏ դատական օրենսգրքի 14 հոդվածի 5-րդ մասը:</p> <p>3. Առաջնորդվելով ՏՏ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, նկատի ունենալով, որ դատական համակարգի հետագա բարեփոխումների հայեցակարգային մոտեցումների շրջանակներում նաեւ վեճի առարկա հիմնահարցերի վերաբերյալ նախապատրաստվում են օրենսդրական բարեփոխումներ, հաշվի առնելով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերի վերացումը կարող է առաջացնել իրավական բաց, սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին եւ 2-րդ կետերով ՏՏ Սահմանադրությանը <b>հսկասող ևւ անվա-</b></p>	2 դեկտեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 782

			<b>վերջ</b> ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2009թ. մարտի 1-ը:	
		14-րդ հոդվածի 4-րդ մաս	1. ՆՆ դպրական օրենսգրքի 14 հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը:	23 դեկտեմբերի 2008 թվականի ՍԴՈ - 786
		91-րդ հոդվածի 4-րդ մաս	1. ... ՆՆ դպրական օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում են ՆՆ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված <b><u>իրավական դիրքորոշումների շրջանակներում:</u></b>	28 սեպտեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 918
		94-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդաբու» բառից հետո՝ ամբողջությամբ եւ 3-րդ մաս	1. ... ՆՆ դպրական օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «ավանդաբու» բառից հետո՝ ամբողջությամբ, եւ 3-րդ մասով .... գործի վարույթը կարճել՝ հիմնվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 32 հոդվածի 3-րդ մասի, 60 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի եւ 69 հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերի վրա:	4 ապրիլի 2008 թվականի ՍԴՈ - 747
		111-րդ հոդվածի 6-րդ մաս, 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը եւ 158-րդ հոդվածի 1-ին մաս	1. ՀՀ դատական օրենսգրքի 111-րդ հոդվածի 6-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:  2. ՀՀ դատական օրենսգրքի 155-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ներկայացված <b><u>սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում</u></b> , համաձայն որի՝ ՀՀ արդարադատության խորհրդի կարգապահական հանձնաժողովը պարտավոր է անձի դիմումը մերժելու դեպքում ողջամիտ ժամկետում իր պատասխանում հիմնավորել վարույթ չհարուցելու պատճառները:  3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 9.1-րդ կետի եւ 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիմքերով դիմող Գ. Գյոզալյանի գործով վերջնական դա-	18 դեկտեմբերի 2012 թվականի ՍԴՈ - 1063

			տական ակտը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման:	
			<b>4.</b> ՀՀ դատական օրենսգրքի 158-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:	
<b>18.</b>	<b>«ՆՆ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՆՆ օրենք (ընդունվել է 22.02.2007թ.)</b>	2.1-րդ հոդված	<b>1.</b> «ՆՆ վճռաբեկ դատարանի քաղաքացիական եւ վարչական պալատի դիմումի հիման վրա՝ «ՆՆ դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՆՆ օրենքի 2.1 հոդվածի՝ ՆՆ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	7 հուլիսի 2009 թվականի ՍԴՈ - 811
<b>19.</b>	<b>ՆՆ ընդանեկան օրենսգիրք (ընդունվել է 09.11.2004թ.)</b>	53-րդ հոդվածի 3-րդ մաս	<b>1.</b> ՆՆ ընդանեկան օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները համապատասխանում են ՆՆ Սահմանադրությանը:	5 հոկտեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 919
		74 եւ 105-րդ հոդվածներ	<b>1.</b> «Քաղաքացի Գոհար Բոփոյանի դիմումի հիման վրա՝ ՆՆ ընդանեկան օրենսգրքի 74 եւ 105-րդ հոդվածների՝ ՆՆ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	25 դեկտեմբերի 2012 թվականի ՍԴՈ - 1064

20.	<b>ՆՏ ընտրական օրենսգրք (ընդունվել է 05.02.1999թ.)</b>	2-րդ հոդվածի 1-ին կետ եւ 122-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետեր	<p>1. ՆՏ ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1-ին կետի դրույթը՝ այն իմաստով, որ պետության կառավարմանը (ՆՏ Նախագահի, ՆՏ Ազգային ժողովի ընտրություններին, համապետական հանրաքվեներին) մասնակցելու իրավունքը վերապահում է միայն ՆՏ փասնութ քարին լրացած քաղաքացիներին, համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:</p> <p>3. Նայաստանում օրինական կարգով մշտական բնակություն հաստատած փախստականների՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությանը մասնակցելու իրավունքը բացառող՝ ... ՆՏ ընտրական օրենսգրքի 2 հոդվածի 1-ին կետի, 122 հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի, ... դրույթները <b>չեն համապատասխանում</b> ՆՏ Սահմանադրության 2, 4, 8, 27, 105 հոդվածների պահանջներին:</p>	16 հոկտեմբերի 1999 թվականի ՍԴՈ - 179
		10-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերություն	1. ՆՏ ընտրական օրենսգրքի 10 հոդվածի 3-րդ մասի 1-ին պարբերության դրույթները համապատասխանում են ՆՏ Սահմանադրությանը սույն որոշման մեջ ՆՏ սահմանադրական դատարանի արտահայտած <b>իրավական դիրքորոշումների շրջանակներում:</b>	8 մայիսի 2009 թվականի ՍԴՈ - 803
		14-րդ հոդվածի 3-րդ կետ	1. Ազգային ժողովի կողմից 1999 թվականի փետրվարի 5-ին ընդունված՝ ՆՏ ընտրական օրենսգրքի (Ազգային ժողովի կողմից 2002թ. հուլիսի 3-ին ընդունված՝ «ՆՏ ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՆՏ օրենքի խմբագրությամբ) 14-րդ հոդվածի 3-րդ կետի «այդ թվում՝ դատարանի վճռով» արտահայտությունն այնքանով, որքանով սահմանափակում է խախտված իրավունքի դատական պաշտպանության հնարավորությունը, <b>չի համապատասխանում</b> ՆՏ Սահ-	1 հոկտեմբերի 2002 թվականի ՍԴՈ - 389

			<p>մանադրության 38 հոդվածի 2-րդ մասին, դրանով իսկ <b>ան-համապարասխանություն</b> առաջացնելով նաև ՏՏ Սահմանադրության 1,2,3,4 եւ 27-րդ հոդվածների հետ եւ Սահմանադրության 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն իրավաբանական ուժ չունի:</p>	
		<p>35-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի երկրորդ նախադասու-թյուն, 4-րդ ենթակետ, 36-րդ հոդվածի 1-ին կետ</p>	<p>1. ՏՏ ընտրական օրենսգրքի 35 հոդվածի 1-ին կետի 3-րդ եւ 4-րդ ենթակետերի եւ 36 հոդվածի 1-ին կետի դրույթները՝ այն մասով, որով նախատեսվում է կենտրոնական եւ ընտրապարաձքային ընտրական հանձնաժողովների կազմում նշանակել դատավորների, ճանաչել ՏՏ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասին եւ 98 հոդվածի 1-ին մասին <b>հակասող եւ անվավեր</b>:</p> <p>2. «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 9-րդ մասի հիման վրա ՏՏ Սահմանադրության 19 հոդվածի 1-ին մասին եւ 98 հոդվածի 1-ին մասին <b>հակասող եւ անվավեր</b> ճանաչել նաև ՏՏ ընտրական օրենսգրքի 35 հոդվածի 2-րդ կետի եւ 38 հոդվածի 3.1. կետի 1-ին եւ 2-րդ ենթակետերի այն դրույթները, որոնցով նախատեսվում է կենտրոնական եւ ընտրապարաձքային ընտրական հանձնաժողովների թափուր փեղերը լրացնել դատավորների թվից:</p> <p>3. «Սահմանադրական դատարանի մասին» ՏՏ օրենքի 68 հոդվածի 11-րդ մասի պահանջներին համապարասխան՝ <b>անվավեր</b> ճանաչված դրույթների կարարումն ապահովված այլ նորմարիվ ակտերը կամ դրանց համապարասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից:</p>	<p>7 նոյեմբերի 2006 թվականի ՄԴՈ - 664</p>



		40.1-րդ հոդվածի 3-րդ կետի՝ «Դիմումը պետք է լինի ստորագրված դիմողի կողմից» դրույթ	1. ՆՏ ընտրական օրենսգրքի 40.1 հոդվածի 3-րդ կետի՝ «Դիմումը պետք է լինի ստորագրված դիմողի կողմից» դրույթը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:	21 դեկտեմբերի 2007 թվականի ՄԴՈ - 722
21.	<b>ՆՏ ընտրական օրենսգիրք (ընդունվել է 26.05.2011թ.)</b>	11-րդ հոդվածի 1-ին մաս, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ եւ 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	1. ՆՏ ընտրական օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի եւ 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթները համապատասխանում են ՆՏ Սահմանադրությանը՝ օրենսգրքում ամրագրված եւ սույն որոշման մեջ ներկայացված <b><u>սահմանադրահրավական այն բովանդակությամբ</u></b> , ինչը, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 9.2-րդ կետի, համառոտ ձևով ենթադրում է, որ այդ դրույթները չեն կարող մեկնաբանվել որպես ընտրական իրավունքի սահմանափակում ու գործնականում արգելափակել ընտրախախտումների բացահայտման առնչությամբ ցանկացած իրավաչափ գործողության կատարման ընթացքում ընտրական գործընթացը սահմանված կարգով վերահսկող իրավասուբյեկտների համար ընտրողների ստորագրած ցուցակների մատչելիությունը՝ որպես ընտրական իրավունքի պաշտպանության, այդ թվում՝ դատական կարգով, անհրաժեշտ երաշխիք:	5 մայիսի 2012 թվականի ՄԴՈ - 1027
		23-րդ հոդվածի 3-րդ մաս, 24-րդ հոդված, 38-րդ հոդվածի 7-րդ մաս, 79-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ	1. ՆՏ ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 3-րդ մասը, 24-րդ հոդվածը, 38-րդ հոդվածի 7-րդ մասը, 79-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետը եւ 80-րդ հոդվածը համապատասխանում են ՆՏ Սահմանադրությանը:	5 մարտի 2013 թվականի ՄԴՈ - 1076

		կեր, 80-րդ հոդված		
22.	<p><b>ՏՏ կառավարության «Երեւանի Կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապարման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին» թիվ 1151-Ն որոշում (ընդունվել է 01.08.2002թ.)</b></p>		<p><b>3.</b> ՏՏ կառավարության 1 օգոստոսի 2002թ. թիվ 1151-Ն որոշումը՝ «Երեւանի կենտրոն թաղային համայնքի վարչական սահմանում կառուցապարման ծրագրերի իրականացման միջոցառումների մասին», հիմքում ունենալով ՏՏ քաղաքացիական օրենսգրքի 218 եւ ՏՏ հողային օրենսգրքի 104 հոդվածների դրույթները, հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների ենթաօրենսդրական կարգավորման առումով <i>չի համապատասխանում</i> ՏՏ Սահմանադրության 3 , 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43, 83.5. (1-ին եւ 2-րդ կետեր), 85 (2-րդ մաս) հոդվածների պահանջներին:</p> <p><b>4.</b> Առաջնորդվելով ՏՏ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի դրույթներով եւ հաշվի առնելով, որ ՏՏ Ազգային ժողովը եւ ՏՏ կառավարությունը պարտավոր են հնարավոր սեղմ ժամկետներում քննության առարկա հիմնախնդրին առնչվող բազմաթիվ իրավական ակտեր ՏՏ Սահմանադրության եւ սահմանադրական դատարանի որոշման պահանջներին համապատասխանեցնել եւ օրենքով հսրակ կանոնակարգել բացառիկ՝ գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման իրավական ռեժիմը, սույն որոշման մեջ ՏՏ Սահմանադրությանը <i>չհամապատասխանող</i> ճանաչված իրավական նորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել օրենքի հիման վրա նման իրավական ռեժիմի ուժի մեջ մտնելու պահը, բայց ոչ ուշ, քան 2006թ. հոկտեմբերի 1-ը:</p>	18 ապրիլի 2006 թվականի ՄԴՈ - 630

23.	<b>ՆՆ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշում</b>		<b>2.</b> ՆՆ Սահմանադրության 3-րդ հոդվածին (2-րդ մաս), 85-րդ հոդվածին (2-րդ մաս), 43-րդ հոդվածին (2-րդ մաս) <b>հակասող նախաձեռնել</b> ՆՆ կառավարության 2004 թվականի փետրվարի 5-ի թիվ 207-Ն որոշումը՝ «Նայրենական մեծ պարերազմի մասնակիցների եւ հաշմանդամների, այլ պետությունների փարածքներում մարտական գործողությունների մասնակիցների, զոհված զինծառայողների ընդհանրության արտոնությունների եւ երաշխիքների փոխադարձաբար ճանաչման մասին» 1994 թվականի ապրիլի 15-ին ԱԳՆ շրջանակներում կնքված եւ ՆՆ համար 1996 թվականի փետրվարի 26-ից ուժի մեջ մտած համաձայնագրի 1-ին հավելվածի 2.3 կետում նշված անձանց իրավունքների իրացման կարգ չնախատեսելու եւ այդ իրավունքներն արգելափակելու մասով՝ հաշվի առնելով սույն որոշման պարճառաբանական մասի 6-րդ եւ 7-րդ կետերում արտահայտված <b>իրավական դիրքորոշումները</b> եւ ի գիտություն ընդունելով ՆՆ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 668-Ն որոշումը:	3 հունիսի 2011 թվականի ՍԴՈ - 966
24.	<b>ՆՆ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 554-Ն որոշում</b>		<b>1.</b> Նայասպանի Նանրապետության կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ 554-Ն որոշումը համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը՝ հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված <b>իրավական դիրքորոշումները</b> :	22 փետրվարի 2013 թվականի ՍԴՈ - 1075
25.	<b>ՆՆ հողային օրենսգրք (ընդունվել է 02.05.2001թ.)</b>	76-րդ հոդվածի 2-րդ մաս	<b>1.</b> ՆՆ հողային օրենսգրքի 76 հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը:	18 մարտի 2008 թվականի ՍԴՈ - 741
		100-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	<b>1.</b> ... ՆՆ հողային օրենսգրքի 100 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթները համապատասխանում են ՆՆ Սահմանադրությանը:	10 հոկտեմբերի 2006 թվականի ՍԴՈ - 650

		104, 106 եւ 108-րդ հոդվածներ	<p><b>2.</b> ՆՏ հողային օրենսգրքի՝</p> <p>ա) 104 հոդվածը՝ հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության հարկադիր օտարման իրավահարաբերությունների կանոնակարգման առումով <b>չի համապատասխանում</b> ՆՏ Սահմանադրության 8 (1-ին մաս), 31 (3-րդ մաս), 43 հոդվածների պահանջներին,</p> <p>բ) 106 հոդվածը <b>չի համապատասխանում</b> ՆՏ Սահմանադրության 31 (3-րդ մաս), 43 եւ 83.5. (1-ին եւ 2-րդ կետեր) հոդվածների պահանջներին,</p> <p>գ) 108 հոդվածը <b>չի համապատասխանում</b> ՆՏ Սահմանադրության 3, 31 (3-րդ մաս) եւ 43 հոդվածների պահանջներին:</p> <p><b>4.</b> Առաջնորդվելով ՆՏ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի դրույթներով եւ հաշվի առնելով, որ ՆՏ Ազգային ժողովը եւ ՆՏ կառավարությունը պարտավոր են հնարավոր սեղմ ժամկետներում քննության առարկա հիմնախնդրին առնչվող բազմաթիվ իրավական ակտեր ՆՏ Սահմանադրության եւ սահմանադրական դադարանի որոշման պահանջներին համապատասխանեցնել եւ օրենքով հստակ կանոնակարգել բացառիկ՝ գերակա հանրային շահերով պայմանավորված հասարակության եւ պետության կարիքների համար սեփականության օտարման իրավական ռեժիմը, սույն որոշման մեջ ՆՏ Սահմանադրությանը <b>չհամապատասխանող</b> ճանաչված իրավական նորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել օրենքի հիման վրա նման իրավական ռեժիմի ուժի մեջ մտնելու պահը, բայց ոչ ուշ, քան 2006թ. հոկտեմբերի 1-ը:</p>	18 ապրիլի 2006 թվականի ՍԴՈ - 630
26.	<b>ՆՏ մաքսային օրենսգիրք (ընդունվել է 06.07.2000թ.)</b>	203-րդ հոդված	<b>1.</b> ՆՏ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը՝ սույն որոշման	12 հոկտեմբերի 2010 թվականի

			մեջ արտահայտված <b><u>իրավական դիրքորոշումների շրջանակներում:</u></b>	ՄԴՈ - 920
27.	<b>«ՆՆ-ում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՆ օրենք (ընդունվել է 17.05.2000թ.)</b>	1-ին հոդվածի 6-րդ մաս	1. ՆՆ վարչական դատարանի դիմումի հիման վրա գործի վարույթը՝ «ՆՆ-ում սպուգումների կազմակերպման եւ անցկացման մասին» ՆՆ օրենքի 1-ին հոդվածի 6-րդ մասի, ... իրավակիրառ պրակտիկայում փրված մեկնաբանմամբ, մասով, կարճել:	27 հոկտեմբերի 2009 թվականի ՄԴՈ - 836
28.	<b>ՆՆ վարչական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 28.11.2007թ.)</b>	3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտությունը	1. ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտությունը համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված <b><u>իրավական դիրքորոշումների շրջանակներում:</u></b>	7 սեպտեմբերի 2010 թվականի ՄԴՈ - 906
		8-րդ հոդվածի 1-ին մաս	1. ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ գլուխը, այնքանով, որքանով բացառում է վարչաիրավական հարաբերություններից անանցվող քաղաքացիաիրավական վեճի լուծումը մեկ գործի սահմաններում, ճանաչել ՆՆ Սահմանադրության 18 (1-ին մաս) եւ 19 (1-ին մաս) հոդվածների պահանջներին <b><i>հակասող եւ անվավեր:</i></b>	3 փետրվարի 2009 թվականի ՄԴՈ - 787
		68-րդ հոդվածի 3-րդ մաս	1. ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված <b><u>իրավական դիրքորոշումների շրջանակներում</u></b> ՝ հաշվի առնելով նաեւ վարչական մարմնի անգործության դեմ դատական պաշտպանության հնարավորությունը: 2. ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ մասի հետ համակարգային առումով	22 փետրվարի 2011 թվականի ՄԴՈ - 942

			փոխկապակցված՝ ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 114-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետն այն մասով, որը վարչական ակտի հետ մեկտեղ չի ներառում վարչական մարմնի գործողությունը եւ անգործությունը, ճանաչել ՆՆ Սահմանադրության 18 եւ 19-րդ հոդվածներին <b>հակասող եւ անվավեր:</b>	
	73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ	1. «Զաղաքացի Արտակ Զեյնալյանի դիմումի հիման վրա՝ ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ ՆՆ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:	30 նոյեմբերի 2010 թվականի ՄԴՈ - 927	
	79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	1. ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը՝ <b>սահմանադրափրավական այն բովանդակությամբ,</b> համաձայն որի՝ վարչական դատավարությունում հայցադիմումի ընդունելիության հարցի քննության փուլում այն չի կարող ընկալվել ու մեկնաբանվել որպես նյութական իրավունքի խախտման առկայության կամ բացակայության փաստը հաստատելու՝ օրենքով նախատեսված պահանջ կամ հայեցողություն:	17 ապրիլի 2012 թվականի ՄԴՈ - 1022	
	113-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասեր	1. ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերը համապատասխանում են ՆՆ Սահմանադրությանը:	5 փետրվարի 2013 թվականի ՄԴՈ - 1074	
	115-րդ հոդված եւ 118-րդ հոդվածի 1-ին մաս	4. ՆՆ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը եւ 118-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել ՆՆ Սահմանադրության 1-ին հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին	25 նոյեմբերի 2008 թվականի ՄԴՈ - 780	

		<p><b>հակասող և անվավեր:</b></p> <p>5. Առաջնորդվելով ՆՏ Սահմանադրության 102 հոդվածի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68 հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով, նկատարի ունենալով, որ սահմանադրական դատարանի որոշման ընդունման պահից սույն գործով վեճի առարկա իրավանորմերի վերացումը կարող է առաջացնել իրավական բաց՝ խաթարելով այդ նորմերի վերացմամբ հասարակվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշման եզրափակիչ մասի 4-րդ կետով ՆՏ Սահմանադրությանը <b>հակասող և անվավեր</b> ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2009թ. մարտի 31-ը՝ ՆՏ Ազգային ժողովին հնարավորություն տալով օրենսդրական կարգավորումները համալիր ձևով համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:</p>	
	118 եւ 118.6-րդ հոդվածներ	<p>1. ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածը՝ սույն որոշման մեջ ՆՏ սահմանադրական դատարանի արքահայրած <b>իրավական դիրքորոշումների շրջանակներում</b> համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:</p> <p>2. ՆՏ վարչական դատավարության օրենսգրքի 118.6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «առկա է» եւ «հանգեցրել է» բառակապակցությունները՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրանց տրված մեկնաբանության շրջանակներում ճանաչել ՆՏ Սահմանադրության 19-րդ հոդվածին (1-ին մաս) <b>հակասող և անվավեր:</b></p> <p>3. Առաջնորդվելով ՆՏ Սահմանադրության 102-րդ հոդվա-</p>	13 ապրիլի 2010 թվականի ՍԴՈ - 873

			<p>ծի 3-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՆՏ օրենքի 68-րդ հոդվածի 15-17-րդ մասերի դրույթներով եւ հաշվի առնելով, որ վարչական արդարադատության առկա երկաստիճան համակարգի գործունակության եւ արդյունավետության անհրաժեշտ մակարդակի ապահովումը կամ հիմնախնդրին համակարգային այլ լուծումներ փալը պահանջում են օրենսդրական համարժեք կարգավորումներ, սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետով ՆՏ Սահմանադրությանը <b>հակասող եւ անվավեր</b> ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնական ժամկետ սահմանել 2010թ. դեկտեմբերի 1-ը:</p>	
		138-րդ հոդված	<p>1. ՆՏ վարչական դատարարության օրենսգրքի 138-րդ հոդվածը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:</p>	11 ապրիլի 2012 թվականի ՄԴՈ - 1020
		141-րդ հոդվածի 1-ին մաս	<p>1. ՆՏ վարչական դատարարության օրենսգրքի 141-րդ հոդվածի 1-ին մասն այն մասով, որով արգելափակվում է անձի իրավունքը՝ դատարարական իրավունքի նորմի խախտման հիմքով բողոքարկելու նորմարիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարանի դատական ակտերը, ճանաչել ՆՏ Սահմանադրության 3-րդ, 18-րդ եւ 19-րդ հոդվածներին <b>հակասող եւ անվավեր</b>:</p>	8 փետրվարի 2011 թվականի ՄԴՈ - 936
		151 եւ 152-րդ հոդվածներ	<p>1. ՆՏ վարչական դատարարության օրենսգրքի 151-րդ հոդվածը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը: 2. ՆՏ վարչական դատարարության օրենսգրքի 152-րդ հոդվածը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:</p>	5 փետրվարի 2010 թվականի ՄԴՈ - 864



29.	<b>ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 17.06.1998թ.)</b>	2-րդ հոդվածի 1-ին մաս, 159-րդ հոդված	<p>1. ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 159-րդ հոդվածի .... մասով գործի վարույթը կարճել՝ հիմնվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՆՆ օրենքի 32 հոդվածի 3-րդ մասի, 60 հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերի եւ 69 հոդվածի 1-ին եւ 7-րդ մասերի վրա:</p> <p>2. ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը:</p>	4 ապրիլի 2008 թվականի ՍԴՈ - 747
		21, 22 եւ 23-րդ հոդվածների՝ ինքնաքացարկ հայտնելու մասին միջնորդություն ներկայացնելու մասով	<p>1. ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21, 22 եւ 23-րդ հոդվածները՝ ինքնաքացարկ հայտնելու մասին միջնորդություն ներկայացնելու մասով... համապատասխանում են ՆՆ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված <b><u>հրավական դիրքորոշումների շրջանակներում:</u></b></p>	28 սեպտեմբերի 2010 թվականի ՍԴՈ - 918
		24-րդ գլուխ	<p>1. ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24 գլխով սահմանված դրույթները համապատասխանում են ՆՆ Սահմանադրությանը:</p>	8 մայիսի 2007 թվականի ՍԴՈ - 700
		26-րդ գլուխ	<p>1. ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ գլուխը համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը:</p>	28 նոյեմբերի 2007 թվականի ՍԴՈ - 719
		48-րդ հոդվածի 2-րդ մաս	<p>1. ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48 հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է ՆՆ Սահմանադրությանը:</p>	8 դեկտեմբերի 2009 թվականի ՍԴՈ - 845
		77-րդ հոդված	<p>1. ՆՆ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 77 հոդվածը համապատասխանում է ՆՆ Սահմանադրու-</p>	22 ապրիլի 2008 թվականի

			թյանը:	ՄԴՈ - 752
	92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	1. «Բջնի» հանքային ջրերի գործարան» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ ՆՏ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:		29 մարտի 2011 թվականի ՄԴՈ - 946
	108-րդ հոդված	1. ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածը համապատասխանում է ՆՏ Սահմանադրությանը:		2 նոյեմբերի 2010 թվականի ՄԴՈ - 922
	160-րդ հոդվածի 1-ին կետ	1. ՆՏ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերությունը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան փոխված բովանդակությամբ, ճանաչել ՆՏ Սահմանադրության 18 եւ 19 հոդվածների պահանջներին <b>հսկաստղ եւ անվավեր:</b>		16 նոյեմբերի 2006 թվականի ՄԴՈ - 665
